ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2010 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 20-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 1995 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՅԱՆԻ ՄԱՍԻՆ» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԹԻՎ 5 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան 15 փետրվարի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող), Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ Ա. Նազարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի օգոստոսի 20-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միջեւ 1995 թվականի մարտի 16-ի՝ «Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միջեւ Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին» պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին թիվ 5 արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հա-

յաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2010 թվականի դեկտեմբերի 14-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով արձանագրությունը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միջեւ 1995 թվականի մարտի 16-ի՝ «Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միջեւ Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին» պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին թիվ 5 արձանագրությունն ստորագրվել է 2010 թվականի օգոստոսի 20-ին Երեւանում՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի կողմից:

2. Արձանագրության համար պայմանագրաիրավական հիմք է հանդիսանում Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միջեւ 1995 թվականի մարտի 16-ի՝ «Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միջեւ Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին» պայմանագիրը (Պայմանագիր), որը կնքվել է երկու պետությունների ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունը եւ անվտանգությունը պաշտպանելու նպատակով՝ հաստատելով երկու պետությունների նվիրվածությունը Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության, Անկախ պետությունների համագործակցության կանոնադրության եւ Կոլեկտիվ անվտանգության պայմանագրի նպատակներին ու սկզբունքներին:

Համաձայն Պայմանագրի՝ վերջինիս դրույթները կարող են վերանայվել կողմերից մեկի նախաձեռնությամբ եւ փոխադարձ համաձայնությամբ:

Պայմանագիրը վավերացվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 1997 թվականի ապրիլի 29-ին:

3. Ըստ գործի նյութերի՝ արձանագրությունն ուղղված է տարածաշրջանում խաղաղության եւ անվտանգության ամրապնդմանը: Արձանագրությամբ ընդլայնվում

են ռուսաստանյան ռազմակայանի խնդիրները, այդ թվում՝ ռուսաստանյան ռազմակայանը Հայաստանի Հանրապետության զինված ուժերի հետ համատեղ ապահովում է Հայաստանի Հանրապետության անվտանգությունը, ի տարբերություն Պայմանագրի գործող ձեւակերպման, համաձայն որի՝ ռուսաստանյան ռազմակայանը Հայաստանի Հանրապետության զինված ուժերի հետ համատեղ ապահովում է Հայաստանի Հանրապետության անվտանգությունը՝ **նախկին ԽՍՀ Միության արտաքին սահմանով** (Թուրքիա եւ Իրան): Հիշյալ ձեւակերպումը, ըստ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրության, որեւէ տարանջատում չի մտցնում Հայաստանի Հանրապետության հարեւան երկրների միջեւ՝ դրանով իսկ վերացնելով նախկին ձեւակերպումից բխող այն եզրակացությունը, թե Թուրքիայից եւ Իրանից Հայաստանի անվտանգության ապահովման խնդիրն առաջնահերթություն ունի:

Երկարաժամկետ պլանավորմամբ պայմանավորված՝ արձանագրությամբ նաեւ երկարաձգվում է Պայմանագրի գործողության ժամկետը (դրանով իսկ նաեւ Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի գտնվելու ժամկետը)՝ նախկին 25 տարվա փոխարեն՝ 49 տարի:

4. Ըստ արձանագրության (Պայմանագրի 3-րդ եւ 26-րդ հոդվածների վերախմբագրմամբ)՝ Հայաստանի Հանրապետությունը եւ Ռուսաստանի Դաշնությունը (կողմեր) համաձայնում են.

- ռուսաստանյան ռազմակայանը կատարում է կողմերի համապատասխան պայմանավորվածություններից բխող խնդիրները.

- ռուսաստանյան ռազմակայանը, Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելու ընթացքում, բացի Ռուսաստանի Դաշնության շահերի պաշտպանության գործառույթներից, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի հետ համատեղ ապահովում է Հայաստանի Հանրապետության անվտանգությունը.

- նշված նպատակներին հասնելու համար ռուսական կողմն աջակցում է ժամանակակից եւ համատեղելի սպառազինությամբ, ռազմական (հատուկ) տեխնիկայով Հայաստանի Հանրապետությանն ապահովելու գործին.

- ռուսաստանյան ռազմակայանի զինվորական կազմավորումների կիրառումն իրականացվում է կողմերի փոխադարձ պայմանավորվածությունների, 1992 թվականի մայիսի 15-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի, 1997 թվականի օգոստոսի 29-ի՝ Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միջեւ

բարեկամության, համագործակցության եւ փոխադարձ օգնության մասին պայմանագրի հիման վրա, ինչպես նաեւ կողմերի օրենսդրության հիման վրա.

- Պայմանագիրը գործում է քառասունինը տարվա ընթացքում եւ ինքնաբերաբար երկարաձգվում է իրար հաջորդող հնգամյա ժամանակաշրջանների համար, եթե կողմերից ոչ մեկը հերթական ժամանակաշրջանի ավարտից առնվազն 6 ամիս առաջ գրավոր չի ծանուցում մյուս կողմին դրա գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին: Պայմանագրի դրույթները կարող են վերանայվել կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ եւ փոխադարձ համաձայնությամբ:

Արձանագրությունը ենթակա է վավերացման եւ ուժի մեջ է մտնում կողմերի միջեւ վավերագրերի փոխանակման օրվանից:

Արձանագրությունը կազմված է հայերեն եւ ռուսերեն, ընդ որում՝ երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Արձանագրությունը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

5. Արձանագրության եւ գործում առկա մյուս փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ արձանագրությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 9-րդ հոդվածի դրույթներին, քանի որ միջազգային իրավունքի սկզբունքներին եւ նորմերին համապատասխան պետությունների միջեւ ապահովում են բարիդրացիական եւ փոխշահավետ համագործակցություն, միաժամանակ ուղղված են Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ամրապնդմանը, արտաքին սպառնալիքների դիմակայմանը, տարածաշրջանում խաղաղության եւ անվտանգության հաստատմանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2010 թվականի օգոստոսի 20-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միջեւ 1995 թվականի մարտի 16-ի՝ «Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միջեւ Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին» պայմանա-

գրում փոփոխություններ կատարելու մասին թիվ 5 արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

15 փետրվարի 2011 թվականի
ՍԴՈ-938